

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ  
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Պայմանագիրը դադարում է գործել հետևյալ դեպքերում.
  - 1.1 Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում,
  - 1.2 այն դեպքում, երբ Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով Ապահովագրավճարի հերթական վճարումը չի կատարել:
  - 1.3 դատարանի կողմից Պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու դեպքում,
  - 1.4 ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի սննկացման դեպքում,
  - 1.5 Ապահովադիրի (Շահառուի) կողմից գույքի օտարման դեպքում,
  - 1.6 Ապահովագրողի և Ապահովադիրի փոխադարձ համաձայնությամբ,
  - 1.7 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
2. Եթե Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է Ապահովագրական պատահարի ի հայտ գալու հնարավորության վերանալու պատճառով և Ապահովագրական ռիսկի գոյությունը դադարում է Ապահովագրական պատահարից զատ այլ հանգամանքներից ելնելով (օրինակ ապահովագրված գույքի ոչնչացումը ոչ ապահովագրական պատահարի հետևանքով), Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադիրին Պայմանագրի գործողության ժամկետի չլրացած օրերի համար համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերով (Ապահովագրավճարի 42.05%), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մի մասը հաշվարկվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$\text{ՎԱ} = \frac{(U - 42.05\% * U) * n}{N} - Z,$$

U՝ Պայմանագրով վճարված Ապահովագրավճարը,  
42.05%\*U՝ Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերը,  
n՝ Պայմանագրի գործողության ավարտին մնացած ամբողջական ամիսները,  
Z՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,  
N՝ ամբողջական ամիսների քանակը, որոնց ժամկետով կնքվել է Պայմանագիրը,  
ՎԱ՝ վերադարձման ենթակա Ապահովագրավճարը:

3. 2. կետում նշված հանգամանքներից տարբեր այլ հանգամանքներում Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրավճարը չի վերադարձվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: